ՊԱՅՄԱՆԱԳԻՐ №37-2019

ք. Երևան «08»հունվարի 2019թ.

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝Պատվիրատու), ի դեմս գլխավոր քարտուղար Վահե Էլոյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝Կատարող) ի դեմս տնօրեն Հակոբ Փանոսյանի, որը գործում է «Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության հիման վրա մյուս կողմից, միասին անվանվելով նաև Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Պատվիրատուն, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի № 1հավելվածի № 1աղյուսակի 1045 ծրագրի «12004 Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում»և«12002. Միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» միջոցառումները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, իր կանոնադրությունը, պատվիրումէ, իսկ Կատարողը պարտավորվում է իրականացնել ուսումնամարզական գործունեության կազմակերպում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում, պետական կրթական չափորոշիչներին համապատասխան հանրակրթական և միջին մասնագիտական ծրագրերի իրականացումը (այսուհետ՝ Ծառայություն):

2. Կողմերի պարտականությունները

2.1 **Կատարողը պարտավոր է՝**

2.1.1 Պատվիրատուի հատկացրած միջոցներով կատարել սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված Ծառայությունը,

2.1.2 ապահովել իրականացվող աշխատանքների հաշվառումը և հաշվապահական հաշվառման վարումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.1.3 մինչև հաջորդող ամսվա տասը Պատվիրատուին ներկայացնել նախորդ ամսվա կատարված աշխատանքների վերաբերյալ պահանջվող հաշվետվություններ և այլ անհրաժեշտ տեղեկություններ՝ համաձայն № 2 հավելվածի,

2.1.4 Ծառայության կատարման ծախսերի նախահաշվում փոփոխության անհրաժեշտություն առաջանալու դեպքում այն նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ,

2.1.5 չծախսված գումարի վերջնական (տարեվերջյան) ազատ մնացորդը վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

2.2 **Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1Կատարողին ցուցաբերել անհրաժեշտ գործնական և մեթոդական օժանդակություն,

2.2.2պարբերաբար վերլուծել Կատարողի կողմից իրականացվող աշխատանքները, մշակել առաջարկություններ գործունեության հետագա ծրագրերի բարելավման վերաբերյալ, տալ ցուցումներ բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ,

2.2.3 «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի № 1հավելվածի № 1աղյուսակի 1045 ծրագրի «12004 Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում » և «12002. Միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» միջոցառումներով նախատեսված ֆինանսական միջոցները տրամադրել Կատարողին համաձայն № 1և№ 2հավելվածների պայմանների,

2.2.4 հետևել սույն պայմանագրի 1.1 կետին համապատասխան մատուցված Ծառայության ընթացքին, իսկ դրանում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

3.Կողմերի իրավունքները

3.1 **Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 հետևել Ծառայության կազմակերպման ընթացքին և պատշաճ անցկացմանը,

3.1.2 պարբերաբար ուսումնասիրել հատկացված դրամական միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործումը և ներկայացվող հաշվետվությունների հավաստիությունն ու ճշտությունը,

3.1.3 ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարված Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

3.1.4 իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

3.2 **Կատարողն իրավունք ունի՝**

3.2.1 Պատվիրատուից պահանջել վերացնել բոլոր այն թերություններն ու բացթողումները, որոնք խոչընդոտում են Կատարողին լիարժեք իրականացնել իր գործունեությունը սույն պայմանագրի շրջանակներում,

3.2.2 իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

4. Պայմանագրի գինը և վճարման պայմանները

4.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների գինը կազմում է 349667700 (երեք հարյուր քառասուն ինը միլիոն վեց հարյուր վաթսունյոթ հազար յոթ հարյուր) հազար Հայաստանի Հանրապետության դրամ՝ ներառյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված բոլոր հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները:

4.2 Սույն պայմանագրի 4.1 կետով նախատեսված գումարը Պատվիրատուն փոխանցում է Կատարողին՝ համաձայն №2հավելվածում նախատեսված վճարման ժամանակացույցի, №1հավելվածով նախատեսված աշխատանքների ծավալների ապահովման դեպքում համապատասխան ստորաբաժանման(ների) կողմից տրված դրական եզրակացության հիման վրա:

4.3 Պատվիրատուն վճարումն իրականացնում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ֆորս-մաժոր)

5.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո,և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներեն երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվումէ 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Պայմանագրի փոփոխում,լուծումը կամ դադարումը

6.1 Սույն պայմանագրում փոփոխություններն և(կամ) լրացումները կատարվում են Կողմերի համաձայնությամբ՝լրացուցիչ համաձայնագրով, որը սույն պայմանագրի անբաժանելի մասն է: Սույն պայմանագիրը փոփոխելիս և (կամ) լրացնելիս Կողմերի պարտավորությունները պահպանվում են ըստ փոփոխված և (կամ) լրացված պայմանագրի պայմանների (դրույթների):

6.2 Սույնպայմանագիրը լուծվում և դադարում է՝

6.2.1 Կողմերի կողմից սույն պայմանագրով նախատեսված պարտականությունների ամբողջությամբ կատարելու դեպքում.

6.2.2եթե լրացել է պայմանագրի գործողության ժամկետը.

6.2.3Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1 Սույն պայմանագիրը գործում է 2019 թվականի բյուջետային տարում:

8. Վեճերի լուծման կարգը

8.1 Սույն պայմանագրից ծագող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ դատական կարգով:

9. Այլ դրույթներ

9.1 Սույն պայմանագիրը կազմված է 2 (երկու) հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող օրինակներից, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

9.2 Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում կատարվում է գրավոր:

9.3 N 1 և N 2 հավելվածները կազմում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.4 Սույն պայմանագրով Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետությանօրենսդրությամբ սահմանված կարգով:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ սպորտի և երիտասարդության	«Գյումրո օլիմպիական հերթափոխի պետական
Հարցերի նախարարություն	մարզական քոլեջ» ՊՈԱԿ
ք. Երևան, Աբովյան9	ք. Գյումրի, Բուլվարային 10Ա,
Հ/Հ՝ 90001105910 4	Հ/Հ՝ Ֆինանսների նախարարության գործառնական
Հ/Հ՝ 90001105931 9	վարչություն
ՀՎՀՀ՝ 02586282	h/h 90021800098 3
Գլխավոր բաժնետեր՝	ՀՎՀՀ 05562502
_____ Էլոյան	Տնօրեն
Կ.Տ.	_____ Հ.Փանոսյանի

Հավելված N 1
08.01. 2019 թ. կնքված N 37 -2019 պայմանագրի

Աշխատանքի անվանումը	Սովորողների (ուսանողների) տարեկան միջին թիվը	Կրթաթոշակ ստացող սովորողների (ուսանողների) թիվը	Կրթաթոշակի տարեկան գումարը (հազ. դրամ)	Տարեկան ֆինանսավորման չափը (հազ. դրամ)
Հանրակրթական և միջին մասնագիտական ուսուցում	307	215	12.255.0	349.667.7

Հավելված N 2
08.01. 2019 թ. կնքված N 37 -2019 պայմանագրի

Վճարման ժամանակացույց

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը*	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը*	Նախատեսվում է ֆինանսավորել << 2019 թվականի պետական բյուջեից միջոցների կամ արտաբյուջետային միջոցների հաշվին, ընդ որում՝												
		I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			Ընդամենը
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստ	սեպտ	հոկտ	նոյեմբ	դեկտ	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից	4727	0.0	1021.5	2042.9	3064.2	4085.5	5106.6	8170.5	8170.5	8170.5	9532.0	10893.5	12255.0	12255.0
Այլ նպաստներ բյուջեից	4729	0.0	36609.3	73218.6	100549.0	127879.4	155209.7	237201.1	237201.1	237201.1	270605.0	304008.9	337412.7	337412.7
Ընդամենը		0.0	37630.8	75261.5	103613.2	131964.9	160316.3	245371.6	245371.6	245371.6	280137.0	314902.4	349667.7	349667.7

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
հ/հ 900011059194
հ/հ 900011059319
ՀՎՀՀ-02586282
Գլխավոր քարտուղար՝

Վ. Էլոյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ
ք. Գյումրի, Բուլվարային 10 Ա,
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
հ/հ 900218000983
ՀՎՀՀ 05502502
Տնօրեն՝

Հ. Փանոսյան

Կ.Տ